

ԵՐԿԻՐԸ՝ ԴՐԱԽՏ

Հրամայէ Տէ՛ր, ինչ բան որ չար է՝ չըմանայ յաւէս,
Ու դժողմն այս մեծ դառնայ մեզ համար դրախտ փրկաւէս.
Բարութեան բազուկդ թող լայն տարածուի ամենուն վրայ,
Եւ բոլոր մարդոց սիրտերը սիրոյ ովկիանոս դառնայ:

Ինչքան լաւ կ'ըլլայ որ երկիրները չունենան սահման.
Ամէն տեսակ գէնի, գինուոր ու կապանի իսպառ վերանան,
Ու հորիզոնէ մինչեւ հորիզոն աշխարհի վրայ
Նաղաղութեան սուրբ ծիրանի գոտին թելերն իր բանայ:

Մարդերը դառնան՝ մէկ հօտ, մէկ հովիւ՝ ունենան միայն,
Ու եղբայրանան քաղցր իտէպով հաւասարութեան,
Ապրին համեաւես, իրարու ինչքին երբե՛ք չըցանկան,
Բարձրեալիդ փառք սան, եւ նմաններու սիրով արբենան:

Ո՛վ բարի Աստուած, ժըպիսը քո սուրբ տարածէ անհուն
Լոյսով ռդողուած այս տիեզերքի բոլոր ծագերուն.
Երկինքի նըման՝ երկիրը դրախտ՝ մարդն անմահանայ,
Բարւոյն, Գեղեցկին, Սէրէն լոյս տարած մարդն աստուածանայ:

Ռ. Ա.